ՎԱԽԹԱՆԳ ԱՆԱՆՅԱՆ

«ՔՐԻՍՏՈՍԻ ՉԱՎԱԿԸ» ՔՆՆԻՉԻ ՄՈՏ
(ՀՈՒՇԵՐ ԲԱՆՏԻՑ)

Քուն չէր, այլ մղձավանջ: Պատկերացրեք՝ վաթսուն հոգի, վաթսուն թշվառներ մի սենյակում ոտածոց փռված ցեմենտյա հատակին: Մեկը խռռացնում, մեկը հազում է, մյուսը, որի ոսկորները ջարդել են, տնքում է: Կան, որ գոռում են երազում և վեր թռչում իրենց ձայնից...

Իմ ընկեր Մկրտիչ Արմենը պառկելու տեղ չունի. նստել է անկյունում դրված «պարաշայի» (ընդհանուր միզաման) վրա ու գլխահակ ննջում է: Նոր են բերել մեր «կամերան» (բանտասենյակ), սպասում են, որ մեկն ու մեկին տանեն՝ տեղ բացվի:

Է՜, քունն իսկի աչքս կգա՞: Մկրտիչ Արմենը... «Հեղնարի» հեղինակը, մեզ՝ հին կոմերիտականներիս, գերողն իր առաջին գողտրիկ պատմվածքներով՝ «Զուբեիդա», «Ծաղկավոր չիթը», «Խանդը»... Մարդկանց արանքներով ոտքս դնելու տեղ փնտրելով, լարախաղացի նման հավասարակշռությունս պահպանելով, որ չտապալվեմ քնածների վրա, առաջ գնացի, հասա իրեն:

- Գնանք, Արմե՛ն ջան, գնանք, իմ տեղը պառկի՛ր, - շշնջացի ես կռանալով:

- Իսկ դո՞ւ...

- Ես քո տեղը կնստեմ...

Գլուխը բացասաբար շարժեց: Չկարողացա համոզել: Նույն ճանապարհով, նույն հուշիկ ու երերուն քայլերով հասա տեղս, աղյալս վերցրի, տարա, գցեցի ուսերին: Չառարկեց: Միայն ներքևից վերև նայեց՝ դառն ժպտալով ու երախտիքի լուռ արտահայտությամբ:

Արածիցս գոհ՝ նոր էի պառկել տեղս, երբ դուռը բացվեց, և լսվեց հրամանը.

- Բանտարկյա՛լ Վախթանգ Անանյան...

Դուրս եկա կամերայից, և երկու զինվորներ, սվիններն առաջ արած, ինձ տարան վերին հարկերից մեկը:

Իմ քննիչ Միրզոյանը բավական քաղաքավարի ընդունեց ինձ: Նույնիսկ ժպտաց, և դրանից լրիվ երևացին մեծ-մեծ ատամները:

- Քաղաքացի՛ Վախթանգ Անանյան, ես Սևանում ուսուցիչ եմ եղել և ծանոթ եմ քո գրական գործերին. որպես գրականության մարդ՝ պետք է որ լինես ճշմարտախոս: Իմ հարցերին, խնդրեմ, ճիշտ պատասխանես, որով կարող ես քո դրությունը թեթևացնել:

- Ոչինչ չունեմ թաքցնելու, հարցրե՛ք:

- Դուք մոտիկից ճանաչո՞ւմ եք Արմենակ Ղուկասյանին:

- Շատ մոտիկից: Նա մեր գյուղացին է. միասին ենք մտել կոմերիտմիության շարքերը:

- Շա՜տ լավ, շա՜տ լավ... Ձեր մտերմությունը շարունակվել է մինչև քո բանտարկությո՞ւնը:

- Այո՛:

- Տեսա՞ր, որ ճիշտ չես խոսում: Նա քո մասին մատերիալներ չի՞ գրել Մոսկվայի այն խմբագրություններին, որոնք տպում էին քո որսորդական պատմվածքները:

- Դուք որտեղի՞ց գիտեք...

Քննիչս այնքան լայն ժպտաց, որ վերևի երկու ատամները, որոնք նապաստակի խոշոր, կրծող ատամներ էին հիշեցնում, կարծես թե առաջ եկան և անցան ներքին շրթունքի սահմանագիծը:

- Մենք ամե՜ն բան գիտենք, բարեկա՛մ. մենք եթե ամեն բան չիմանայինք, դու հիմա քո արարքների համար անպատիժ սարերում որս անելիս կլինեիր: Գիտե՛նք, դրա համար էլ դու Ասլի սարերում չես, այլ Չեկայի պադվալում...

Հիացավ քննիչս իր ասածի վրա, իսկ ես լուռ եմ:

- Դե, խոսի՛ր. քեզ վրա ի՞նչ մատերիալներ էր գրում քո հավատարիմ ընկերը:

- Ասեմ: Կարծում էի, որ տղամարդուն վայել բան չէ ընկերոջ նամարդության մասին խոսելը... Այն էլ այնպիսի մի տեղում... Բայց քանի որ գիտեք, ասեմ: Նա ինձ հետ լավ է եղել, քանի դեռ դիրք ունեի և կուսակցության մեջ էի: Երբ 1936 թվականի ամռանը ինձ հեռացրին կուսակցությունից և աշխատանքից, իմ նախկին ընկերներից շատերը երես դարձրին ինձնից: Բայց Արմենակը նրանց թվում չէր: Իրար հետ նարդի էինք խաղում, գարեջուր էինք խմում...

- Երևի քո արած լավություննե՞րն էր հիշում:

- Ի՞նչ լավություններ:

Քննիչս պատասխանի փոխարեն մի թղթապանակ բացեց, թղթերը շուռ տվեց, մեկի վրա կանգ առավ և մի քանի րոպե լուռ ընթերցում էր:

- Մենք ամեն մանրուք գիտենք: Բոլորի՛ մասին: Երբ դու լավ պաշտոն ունեիր «Ավանգարդում», նրան տեղավորել ես համալսարանում, քո գրպանից երբեմն փող ես տվել: Հոդվածներ էիր գրել տալիս, տպագրում «Ավանգարդում» և չաղ հոնորար էիր վճարում պետության հաշվին... Այդպես չէ՞:

- Այո՛, արել եմ:

- Չի՞ պատահել, որ ինքդ հոդված ես գրել, տակը նրա ստորագրությունը դրել, որ հոնորարը ինքը ստանա ու շարունակի ուսումը...

Ես ապշահար էի: Այո՛, այդպիսի երկու-երեք դեպք եղել է տասը տարի առաջ: Եվ դա իմ ու իր գաղտնիքն էր: Այդ որտեղի՞ց իմացան չեկիստները: Իսկապես, որ լավ են աշխատում, կեցցե՜ն իրենք: Ես հիացած էի:

- Հը՞, ի՞նչ ես մտածում, շարունակի՛ր: Քո այդ լավություններին ինչպե՞ս պատասխանեց ընկերդ: Պատմի՛ր: Հա՛, ինչի՞ց հակառակվեց:

Մտածմունքի մեջ եմ ընկել: Իսկապես, Արմենակը ինչո՞ւ հակառակվեց հետս:

- Այնպիսի բան չեմ արել, որ հակառակվեր: Բայց մի անգամ կինս ասաց, թե կպել եմ ընկերոջս ինքնասիրությանը:

- Պատմի՛ր:

- Դատարկ բան է...

- Մեզ համար ոչ մի բան դատարկ չէ: Պատմի՛ր, - հրամայեց քննիչս խստությամբ:

Այդ պահին աչքս ընկավ շեմքին կանգնած սվինավոր զինվորին:

- Ասում է, իբր թե նարդի խաղալիս կպել եմ ինքնասիրությանը:

- Հենց այդքա՞ն, - զարմացավ քննիչս: - Ինչպե՞ս ես կպել:

- Դատարկ բան է: Մեր բակում՝ իր քեռու սենյակի առաջ, նարդի էինք խաղում: Ճխկշխկոցով տանում էի, պարծենում, ձեռ առնում, իսկ նա քրտնել էր զայրույթից: Մեր շուրջը բավական հետաքրքրվողներ էին հավաքվել, գողունի նրանց էր նայում, ալեկոծվում ու սխալը սխալի ետևից թույլ տալիս: Այդ ժամանակ ես վեր կացա ու ծիծաղելով ասացի.

- Արմենա՛կ, գնա խաղալ սովորի՛ր. հետո կգաս, կշարունակենք:

Վեր կացավ ու վրդովված շպրտեց.

- Լա՛վ, Վախթա՛նգ տղա, ես քեզ հետ ուրիշ կերպ կխոսեմ...

Կարծեցի՝ կատակ է անում, ծիծաղեցի, բայց և իսկույն լրջացա, որովհետև աչքերի մեջ չարություն տեսա և ատելություն... Տանը կինս ասաց.

- Դու տե՛ս, թե քո գլխին ինչ կդնի... Դու չես հասկանում, որ քո ինքնավստահ, լոպազ տոնը մարդկանց դուր չի գալիս: Քանի դիրք ունեիր, լռում էին: Իսկ հիմա...

- Կինդ քեզնից խելացի է, - խոսքս կտրեց քննիչս. – հետո՞, ինչպե՞ս հանեց իր վրեժը:

- Է՞հ, Տերն իր հետ, այդ մասին չեմ ուզում ո՛չ հիշել, ո՛չ խոսել, - ձեռքս թափ տվի ես: - Ես նույնիսկ չեմ հավատում, որ այդպիսի դատարկ պատճառով ընկերն ընկերոջը կարող է դավաճանել:

Ասացի ու լռեցի:

Քննիչս դաժան դիրք ընդունեց:

- Քո ուզելով չի, կալանավո՛ր Վախթանգ Անանյան, դա գործի համար հարկավոր է, ուրեմն, պիտի պատմես, եթե ոչ...

Ես արդեն գիտեի, թե այն տարիներին ինչ էր նշանակում «եթե ոչ»-ը, ուստի ստիպված շարունակեցի.

- Երբ ինձ հեռացրին կուսակցությունից, պարզ էր, որ այլևս մամուլում աշխատել չէի կարող: Զանգահարեցի Կենտկոմ՝ մամուլի հարցերով զբաղվող մեր ընկերներից մեկին՝ Սաթիկ Սարուխանյանին, և խնդրեցի, որ մտածի ինձ որևէ տեղ տեղավորելու մասին:

- Դու հիմա անկուսակցական ես. քո հարցերով Կենտկոմը զբաղվել չի կարող, դիմի՛ր պրոֆմիությանը, - լսվեց չոր պատասխանը:

Ոնց որ սրտիս մուրճով հարվածեին: Ամբողջ իմ գիտակցական կյանքը կուսակցության մեջ է անցել, կուսակցական օրգաններն են տնօրինել իմ կյանքը, ո՞նց թե դիմեմ պրոֆմիությանը: Այստեղ ես զգացի, որ դեն եմ նետված... Ի՞նչ անեմ, թե որ լավ չեկիստ եք, պիտի գիտենաք, թե բարքերի ինչպիսի մաքրություն է տիրել իմ ղեկավարած հիմնարկում: Իսկ մաքուր մարդը դրամ կունենա՞ ետ գցած: Բայց ես պիտի մտածեի կնոջս և երեխաներիս կերակրելու մասին: Երևանում բոլորը գիտեին, որ ես կու-

սակցությունից հեռացված եմ, և ոչ մի խմբագիր չէր համաձայնվում իմ նյութերը տպագրել: Հիշեցի Մոսկվայի իմ բարեկամներին և որսորդական պատմվածքների մի շարք ուղարկեցի այն օրգաններին, որոնք դեռևս 1935 թվականից տպագրում էին իմ գործերը: Դրանք էին «Կոլխոզնիե ռեբյատա» թերթը և «Պիոներ» ամսագիրը: Եվ նրանք իրար հետևից սկսեցին հրատարակել իմ գործերը: Շնչավորվեցի, բարձրացա ինքս իմ աչքում, հիշեցի ծերունի հորս խոսքը, որ ասաց իմ հուսահատության ժամին. «Ոսկին ինչքան էլ որ ցեխոտեն, սրբես՝ էլի էն ոսկին է, էլի պլպլալու է...»: Քույրս էլ ասաց. «Ապերիկ ջան, մի՛ հուսահատվիր, առյուծը վանդակում էլի նույն առյուծն է...»:

Քննիչս մեծ-մեծ սեպերը բացած այնպես քրքջաց, որ արյունս սառեց: Հասկացա, որ շատ եմ առաջ գնացել իմ զեղումների մեջ:

- Ուրեմն հերդ ու քույրդ քո մասին է՞դ կարծիքն ունեն...

Ու էլի ծիծաղեց բարձր, սառը, Սադայելի ծիծաղով:

Զղջացի արածս ու տեղումս լռեցի:

Ինչ-որ թղթեր նայեց, խորասուզվեց, մտքի ծովն ընկավ, ապա ինձ հիշելով՝ գլուխը բարձրացրեց:

- Հետո՞:

- Հետո, այդքան:

- Քեզ լա՞վ հոնորար էին տալիս քո հակահեղափոխական գրվածքների համար:

- Շատ լավ... Իմ այդ նեղ ամիսներին ռուսներն ինձ պահեցին...

- Սխալ բան են արել... Բա ո՞նց Արմենակ Ղուկասյանի մատերիալին ուշադրություն չեն դարձրել: Չէ՞ որ ամեն խմբագիր մեր երկրում պետք է զգոն լինի... Հա՛, աչքովդ տեսե՞լ ես ընկերոջդ գրած մատերիալը:

- Դուք ինչո՞ւ եք շարունակ դրա մասին խոսում, - վրդովվեցի ես:

- Հաշիվ կա... Ուզում ենք աչքերդ բացել... Շարունակի՛ր:

Ի՞նչ անեի, ախր այս տհաճ խոսակցությունն իմ սրտովը չէր: Ինձ որ մնար, այդ նամարդին առհասարակ կհանեի իմ ուղեղից: Բայց ո՞նց հանեի, ո՞նց մոռանայի: Իսկ սա հա փորփրում է: Հարկադրված շարունակեցի: Հետն էլ մխիթարում էի ինձ. «Լավ է, որ արձանագրություն չի կազմում»: Այն ժամանակ կարծում էի, որ ստոր բան է, մատնության հավասար բան է թեկուզ վատ ընկերոջ մասին իմ՝ քննիչին պատմելը:

- Ուզում էի հանդիպել կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղար Ամատունուն: Կհամոզվի, որ արդար եմ, և չի հաստատի իմ վտարումը կուսակցությունից: Փորձում էի մոտն ընկնել, երբ թերթերում լույս տեսավ նրա ճառը, ուր հակահեղափոխական էին հայտարարված բոլոր այն գործիչները, որոնք մոտ են եղել Աղասի Խանջյանին, և որոնք ղեկավար դիրքեր են գրավել նրա օրոք: Դրանց թվում հիշատակված էր նաև իմ անունը: Անքուն գիշերներից հետո ամեն առավոտ փորձում եմ տեսակցություն խնդրել Ամատունու հետ, բայց չի հաջողվում: Մի օր էլ ասացին, որ գնացել է Մոսկվա: Ետևից գնացի, մտածում եմ՝ եթե չընդառաջեց, կդիմեմ Համկոմկուսի Կենտկոմին: «Մոսկվա» հյուրանոցում ընդունեց ինձ: Մենակ էր: «Ախր ինչի՞ հիման վրա ես ինձ հակահեղափոխական հայտարարել»:

Լցվեցի, արցունքս դեմ առավ կոկորդիս: Ժպտաց, գլուխն օրորեց և ասաց. «Միամիտ ես մնացել... Խանջյանը իմպելիալիզմի ագենտ դուրս եկավ. պարզ չէ՞, որ նրա վստահված մարդկանց մասին ես ուրիշ կերպ արտահայտվել չէի կարող»:

Հույսս չկտրեցի: Որոշեցի մնալ Մոսկվայում, մինչև որ արդարության կհասնեմ: Բայց դրա համար նյութական միջոցներ էին հարկավոր: Ի՞նչ անեմ: Մյուս օրը մտա «Պիոների» խմբագրություն, նոր նյութեր հանձնեցի և կարմրելով, քրտնելով ասացի խմբագրին. «Նյութերիցս եթե մեկն ու մեկը ընդունվի, խնդրում եմ նրա հոնորարը էս գլխից տալ: Մոսկվայում պետք է մնամ, դրամ է պետք...»:

Խմբագիրը Բենիամին Իվանտերն էր՝ «Վիստրալ» վիպակի հեղինակը:

Նայում է ինձ բարեկամի աչքերով, նույնիսկ ինձ թվում է, թե անցյալ տարվա անջատումից հետո կարոտել է: Այդ խմբագրատանն ինձ սիրում էին իմ կոտրտված ռուսերենի, շուտ-շուտ կարմրելու և իրենց ասելով՝ գյուղացիական անարատության համար:

- Հա՞, ուրեմն, ամեն տեղ դու սիրելի՞ ես, - ասաց քննիչս և դարձյալ այնպես սառը քրքջաց, որ սարսռեցի:

Ապա հանկարծ լրջացավ, դաժան դեմք ընդունեց ու մեծ-մեծ ատամների արանքից ֆշշացրեց.

- Մեկ էլ, որ գլուխդ գովել ես, կարցեր կնստեցնեմ... հակահեղափոխական շա՛ն որդի...

- Հակահեղափոխականը դո՛ւ ես, - որոտացի ես՝ ձեռքս ջրով լի գրաֆինին գցելով:

Սվինավորը ներս մտավ:

- Նե նադ, - ձեռքս թափ տվեց քննիչս՝ իրեն զսպելով:

Զինվորը վերադարձավ իր տեղը: Քննիչս մեծ-մեծ քայլերով շրջում է սենյակում ու ծխում: Վերջապես հանդարտվեց, վիրավորանքը կուլ տվեց: Մենք արդեն փորձ ունենք, գիտենք, որ «գործի շահի համար» քննիչը կարող է հայհոյանք էլ տանել: Եթե «գործի շահը» պահանջում է մեղմությամբ արձակել բանտարկյալի լեզվի կապանքները, այդ դեպքում նա ամեն վիրավորանք կտանի: Իսկ եթե «գործի շահը» պահանջում է տանջանքների ենթարկել քննվողին՝ նրա կամքը կոտրելու համար, դա արդեն ամենից հեշտ բանն էր, որովհետև կից սենյակում քննիչի նշանին էին սպասում տանջողները՝ իրենց հարմարանքներով:

- Լա՛վ, եկ բարեկամաբար շարունակենք մեր խոսակցությունը, - վերջապես մեղմացավ քննիչս: - Ախր մենք էլ մեղք ենք, մեզնից էլ պահանջում են... մենք էլ մեր պլաններն ունենք... Իմ քննության տակ հո մենակ դո՞ւ չես...

«Խեղճ քննիչներ», - հեգնանքով մտածեցի ես:

- Որտե՞ղ կանգ առանք: Հա՛, խմբագիրն ի՞նչ ասաց:

- Ասաց՝ չնեղանաս, քեզնից այլևս ոչինչ տպել չենք կարող:

- Ինչո՞ւ, - զարմացած հարցրի ես:

- Որովհետև..., - ու դարակից հանեց և ինձ մեկնեց մեքենագրված մի քանի թղթեր: Նայեցի ստորագրությանը՝ Արմենակ Ղուկասյան՝ կուսակցության անդամ:

Թուղթը բռնել եմ, բայց զայրույթից դողում է ձեռքս: Կարդացի այն մասին, որ ես՝ Վախթանգ Անանյանս, Կրեմլում Ստալինին ներկայացել եմ որպես նախկին տավարած, մինչդեռ որպես կուլակի և քյոխվայի որդի հեռացված եմ կուսակցությունից: Իսկ իրենց զգոնությունը կորցրած խմբագիրները շարունակում են տպագրել համաշխարհային պրոլետարիատի առաջնորդին խաբողի, ժողովրդի այդ ոխերիմ թշնամու գրվածքները... Կարդացի և վեր կացա քրտնած, վրայիցս գոլորշի էր բարձրանում: Վեր կացա և ասացի.

- Ընկե՛ր խմբագիր, իրավունք ունեք ինձնից ոչինչ տպագրելու: Բայց ես գոհ եմ ձեզնից: Շնորհակալ եմ այն ջերմ վերաբերմունքի համար, որ ցույց եք տվել ինձ... նաև իմ խակ գործերը հրատարակելու համար...

Ես խոսում էի հուզված, կցկտուր, իսկ նա նայում էր ինձ անսքող համակրանքով: Լսեց, լսեց ու մեղմությամբ ասաց.

- Նստի՛ր: Քո պատմվածքները մենք շարունակելու ենք տպագրել, ես չեմ հավատում, որ դու կուլակի տղա ես եղել, որ ձեր տանը բատրակներ են մահացել, ինչպես գրված է այս պասկվիլում: Չեմ հավատում, որովհետև պատմվածքներիցդ պարզ երևում ես դու՝ քո գեղջկական անցյալով: Քո ամբողջ մանկությունն իմ աչքի առաջ է, ես քեզ այնքան լավ գիտեմ, որ անկուսակցական համարել չեմ կարող: «ՍՍՍՌ նա ստրոյե» ամսագրի մի ամբողջ համար նվիրված էր Հայաստանին, և տեքստի հեղինակը դու էիր: Ես ուշադիր կարդացել եմ: Կարդացել եմ նաև քո «Հայաստան» հոդվածաշարը «Կոլխոզնիե ռեբյատա» թերթում: Դրանք բոլորը կոմունիստ ժուռնալիստի գրչի արտադրանք են: Կոմունիստ, հասկացա՞ր...

- Վալյա՛, մի որպեով կարելի՞ է:

Ներս մտավ լիքը դեմքով, ճերմակ թշերով մի գեղեցիկ տիկին՝ խմբագրության պատասխանատու քարտուղար Վալենտինա Պոդդուբնայան:

- Վալյա՛, Վախթանգ Անանյանը մեզ հյուր է եկել, տեսե՞լ ես:

- Այո՛, նյութերն ինձ հանձնեց, - առանց ոգևորության, առանց ժպիտի պատասխանեց գեղատեսիլ քարտուղարը:

- Պատրաստեցե՛ք նրա նոր գործերից մեկը այս համարի համար: Զանգահարի՛ր մեր ամսագրին աշխատակցող Մոսկվայի գրողներին և խնդրիր, որ երեկոյան ժամը ութին ներկայանան: Մի փոքր բանկետ պիտի տանք մեր հյուրի պատվին: Որովհետև... որովհետև նրան անտեղի նեղացրել են, սփոփել է պետք...

Ասաց, ժպտաց բարեկամաբար և...

- Հետաքրքիր է, - խոսքս կտրեց քննիչս, - իմացան, որ կուսակցությունից հեռացվել ես, և այդ առթիվ բանկե՞տ տվին...

- Այո՛, բանկետ տվին և խոսեցին իմ գրվածքների մասին, - խայթեցի ես:

Քննիչը մտքերի ծովն ընկած շրջում է սենյակում: Նրա համար անհասկանալի և արտառոց բան էր կատարվել: «Սպասի՛ր, ես սրանց վառեմ», - չարախնդորեն մտածեցի ես ու շպրտեցի.

- Ոչ միայն բանի տեղ չդրին Արմենակ Ղուկասյանի ափեղ-ցփեղ գրածները, այլևս իսկույն հասկացան, որ գործ ունեն մի իսկական կլյաուզնիկի հետ: Իվան-

տերն ինձ ասաց. «Այդ կեղտոտ մատերիալը ինձ հիշեցնում է Կիրովի խոսքը, որ ասել էր Երևանում՝ ձեր Կենտկոմի պլենումում, թե՝ ինչպես երևում է, ձեզ մոտ՝ Հայաստանում, կլյաուզայի համար ավելի շատ հող կա, քան այգեգործության համար: Ես այդ խոսքը լավ եմ հիշում, քաղաքացի՛ քննիչ, որովհետև պլենումում ես էլ կայի: Նրա այդ զգուշացումից հետո՞ էլ չեք հավատում, որ ես և իմ ազնիվ ընկերները կլյաուզայի զոհեր ենք:

Լուռ է, շրջում է մտախոհ: Երևի խոսքս տեղ է հասնում, երևի մարդկայնանում է: Ես հասցրի երկրորդ հարվածը:

- Եվ մինչդեռ այստեղ Չեկայի խրախուսանքով լայն ասպարեզ ունեն Արմենակ Ղուկասյանները, այնտեղ ռուսները ոչ միայն բանկետ տվին ձեր զոհի պատվին, այլև մի քանի օր անց իմ մասին մի ընդարձակ հոդված հրապարակեցին «Լիտերատուրնայա գազետայում»: Պատահաբար տեսա թերթը. նրա երրորդ էջի ճակատին մեծ-մեծ տառերով տպված էր իմ անուն-ազգանունը, և հոդվածագիրն այն միտքն էր հայտնում, որ գրականության մեջ նոր մարդ է մտնում, որն ունի իր սեփական ձայնը: Եվ ընդգծել էին <u>ի՛ր ձայնը</u> բառերը... Ահա ինչպես են վարվում մարդկանց հետ Մոսկվայում... Իսկ այստեղ... իսկ այստեղ...

Այլևս չկարողացա շարունակել:

Մի քանի րոպե լռություն տիրեց: Քննիչս անցավ իր տեղը և մռայլ հարցրեց.

- Իսկ քեզ գովող թերթի խմբագրի վրա քո այդ ազնիվ ընկերը մատերիալ չգրե՞ց:

- Գրեց, ինչպես չէ... առհասարակ նա իր այդ մատերիալը բազմացրել էր և ո՛ր հիմնարկ մտնում էի, ցույց էին տալիս ինձ:

- Այո՛, մի օրինակ էլ մեզ է հանձնել: Ահա, համեցե՛ք...

Այս ասելով՝ քննիչս դարակից թղթեր հանեց և հանձնեց ինձ:

Արյունը գլխիս խփեց: Այսպես էլ ստորությո՞ւն: Բացի լավությունից ախր ես ի՞նչ եմ արել նրան: Այսպես էլ նամարդությո՞ւն: Թուղթը ձեռքս առա և այն զգացումն ունեցա, կարծես մատներս օձին հպվեցին: Նողկանքով կարդացի և նողկանքով էլ նետեցի սեղանի վրա:

- Հը, ի՞նչ կասես, - չարախնդորեն ժպտաց քննիչս:

- Ի՞նչ ասեմ: Կամ իմ ասելուն ո՞վ կհավատա: Ավելի հեշտ չի՞ գնալ գյուղ և տեղում ստուգել, թե ով եմ եղել ես:

- Մենք ժամանակ ունե՞նք քեզ համար գյուղ գնալու:

Ճիշտ էր ասում. հազարավոր մարդիկ են ձերբակալված, բոլորն էլ իրենց անմեղ են հայտարարում, ես խեղճերը ո՞ր մեկի ծննդավայրը գնան:

- Այս մատերիալի մեջ ինչ որ գրած է, կընդունեմ... կամ ընդունել կտանք... Բայց հիմա խոսքը դրա մասին չի: Դու խելքի՞ ես եկել, թե ոչ, աչքերդ չե՞ն բացվել:

Լուռ եմ:

- Եվ մտադիր չե՞ս վրեժ հանել նամարդ մարդուց, որի մատերիալի հիման վրա ձերբակալել են քեզ:

Լուռ եմ:

- Արմենակ Ղուկասյանը հողժողկոմ Վարդան Մամիկոնյանի քարտուղարն էր: Մամիկոնյանը, որ վնասարարություն էր կազմակերպում գյուղատնտեսության բնագավառում, գնդակահարված է: Իսկ նրա քարտուղարն ինչո՞ւ պիտի ազատ մնա գա և քեզ նման ազնիվ կոմունիստների վրա մատերիալ գրի:

Քննիչիս այդ խոսքի վրա սիրտս լցվեց: Այո՛, բերանից փախցրեց, որ ես ազնիվ եմ, ուրեմն դա իր համոզմունքն է, այլապես չէր ասի:

- Եվ մի լակոտ, որ փախել է ռազմական դպրոցից, որ կոմերիտմիության շարքերից հեռացվել է որպես տրոցկիստ, ինչո՞ւ պիտի ազատ լինի, իսկ իր անմեղ ընկերները զոհ գնան...

Զարմացած էի՝ այս որտեղից գիտեն, որ Արմենակ Ղուկասյանին շատ տարիներ առաջ երկու անգամ հեռացրել են կոմերիտմիության շարքերից՝ դասալքության և ուրիշ պատճառներով: Չէ՛, յուրաքանչյուր մարդու կյանքը իր բոլոր կողմերով ուսումնասիրված է:

- Իսկ ինչո՞ւ եք ինձ ասում այդ բոլորը: Ինձ ինչ, թե ով է եղել նա:

- Ասում եմ, որ մեզ օգնես՝ մերկացնենք իսկական թշնամուն:

Ես անակնկալի եկա: Ահա թե ինչու է շարունակ աչքս խոթում Արմենակ Ղուկասյանի արարքները: Ահա թե ինչու այս ամբողջ գիշեր քննության առարկա եմ ոչ թե ես՝ բանտարկյալս, այլ կոմունիստ Արմենակ Ղուկասյանը: «Չէ՛, սրա միտքը ծուռն է, - մտածեցի ես: - Ճիշտ է, որ Արմենակն էլ մի բարի պտուղ չի, բայց սա նրանից խորամանկ է և նրանից վտանգավոր: Զգուշացի՛ր, Վախթա՛նգ, որոգայթ է պատրաստվում»:

- Այսինքն՝ ինչո՞վ պիտի աջակցեմ ձեզ, քաղաքացի՛ քննիչ, - հեգնախառն հարցրեցի ես:

- Գրավոր պիտի գրես այդ սրիկայի մասին:

- Էլ ի՞նչ գրեմ, դուք արդեն բավական նյութեր ունեք ձեր ձեռքի տակ:

- Ունենք, իհարկե, բայց մարդ ձերբակալելու համար մեկ-երկու մարդու գրավոր ցուցմունք է պետք:

- Բայց, քաղաքացի՛ քննիչ, ձեզ հայտնի՞ է, որ ես կյանքումս ոչ ոքի դեմ ցուցմունք տված չկամ... Եվ չեմ էլ տալու: Ես դա ցած եմ համարում մարդկային արժանապատվությունից...

Այս խոսքերն ասացի պաթոսով և շեշտված արժանապատվությամբ:

- Բայց նա քեզ արդեն խորտակել է, - իմ տարօրինակ դիրքից վրդովվեց քննիչս:

- Նա մարդ չի, բայց <u>ես պարտավոր եմ մարդ մնալ</u>... բոլոր պայմաններում, նույնիսկ ձեր ստեղծած այս դժոխքում...

Թափով ասացի և թափով էլ վեր կացա տեղիցս:

Այդտեղ էր, որ երրորդ անգամ լսեցի այն սադայելյան սառը, հոգու մեջ թափանցող քրքիջը:

Քրքջալով հասավ շեմքին և գոռաց դեպի դիմացի դուռը.

- Ծահնազարյա՜ն, Ծահնազարյա՜ն...

- Ի՞նչ է, ի՞նչ է պատահել, - լսվեց միջանցք դուրս ելած մարդու տագնապա-

հար հարցը. երևի կարծում էր, որ հուսահատության հասած բանտարկյալը մորթում է իր քննիչին:

- Ներս արի...

Ներս մտավ միջահասակ, գլուխը քիչ մեծ, բարի աչքերով մի քննիչ՝ Գուրգեն Շահնազարյանը:

- Ի՞նչ կա, ինչի՞ ես կանչել...

- Կանչել եմ, որ ծանոթանաս Քրիստոսի զավակին... Այս ապուշը պաշտպանում է իր թշնամուն:

Անծանոթ քննիչը լսեց պատմությունը, համակրանքով լի հայացքով նայեց ինձ և դառնալով ընկերոջը՝ հարցրեց.

- Իսկ դու կարդացե՞լ ես սրա գրվածքները...

- Ա՜յդ էր մնացել:

- Եթե կարդայիր, կհասկանայիր սրա բռնած դիրքը: Սա մարդ չի մատնի, նույնիսկ... սոցիալիզմի օգտին...

- Դրան ցա՛ծ տարեք, - զայրույթով գոռաց քննիչս:

Փոխվել էր թե՛ ձայնը, թե՛ դեմքի արտահայտությունը: Եվ դա հասկանալի էր ինձ. զուր էին անցել երկու-երեք ժամ տևած իր բոլոր մանյովրները:

Կամերայի դռնից ինձ ներս հրեցին: Ծանր հոտ ու անտանելի գոլորշի էր բարձրանում թշվառ էակներով լեփ-լեցուն այդ մարդկային փարախից... Մկրտիչ Արմենը, պարաշային նստած, ննջում էր: Մեկը խարխափելով առաջ եկավ, քնաթաթախ հրեց ընկերոջս, պարաշայի վրայից վեր կացրեց ու ֆշշոցով միզեց մեջը: Ապա կափարիչը նորից դրեց վրան ու ասաց.

- Նստի՛ր:

Սարսռացի այդ տեսարանից: Ուրեմն գիշերվա ընթացքում քանի՞ անգամ պիտի քնահարամ անեն այս մարդուն: Խե՜ղճ Արմեն... Դառնացած սրտով հասա տեղս, պառկեցի զգուշությամբ, որ ընկերս չարթնանա, ու մտածում եմ՝ արդյոք ճի՞շտ վարվեցի, որ փրկեցի այն նամարդ մարդու կյանքը: Սթափ խորհելով՝ գտա, որ ճիշտ եմ վարվել, քանի որ նա ի՛մ թշնամին էր, բայց ո՛չ իշխանության:

Հետագայում իմացա հետևյալ մանրամասները: Արմենակի եղբայր Վաչագանը, որ աշխատում էր Չեկայի նույն հարկում, առավոտյան տուն է գնում, հանդիպում է եղբորն ու գլուխը դառնորեն օրորելով՝ նախատում.

- Եթե իմանաս, թե ի՜նչ ընկեր կորցրեցիր դու այս գիշեր...

Չգիտեմ՝ տե՞ղ է հասել նրա խոսքը, թե ոչ: Դժվար թե: Որովհետև դրանից հետո ահա քառասուն տարի է՝ իմ մանկության ընկերը շարունակում է մատերիալներ գրել ինձ վրա:

Բայց ես չեմ զղջում այն գիշերվա արարքիս համար: Չեմ զղջում, քանի որ նա մարդ չի, բայց ես պարտավոր եմ մարդ մնալ...

ՎԱՐՊԵՏԻ ԽՈՐՀՐԴՈՎ

Ինձ թվում է, որ ինձ հետ մտերիմ էր այն պատճառով, որ շրջում էի իր սիրած Հայաստանի լեռներն ու ձորերը և տուն էի վերադառնում թարմ տպավորություններով: Ու երբ վերադառնում էի որսից, մոտն էր հրավիրում կամ ուղղակի գալիս էր այն կիսախավար խրճիթը, ուր մի ժամանակ ապրում էի ես: Գալիս էր, դանդաղ ու կակազելով մի համով բան էր ասում ու ինձ խոսքի մեջ քաշում. նրան հետաքրքրում էր ամեն ինչ, որ կապված էր բնության հետ և՛ գիշերները խարույկի մոտ, և՛ քարայծերի խաղաղ արոտը վաղորդյան շաղին, և՛ բնության զարթոնքը կաքավների կղկղոցով, և՛ այն տեսարանները, որ բացվում են Ասլու լեռան կատարից դեպի ազատն Մասիս և Արարատյան դաշտը արևմուտքից արևելք կիսող Արաքսի ջրերն ու դեղին շամբուտները:

Պատմում էի, իսկ նա լսում էր մտախոհ, ու ինձ թվում էր, որ հոգով տեղափոխվում է պատմածս վայրերը: Ինքը ծեր էր, սար չէր բարձրանում, և ես մի տեսակ «կապավորի» դեր էի խաղում իր և հայրենի բնության միջև: Կրկնում եմ, երևի դա էր իմ և իր մտերմության հիմքը:

Մի անգամ ասաց.

- Դժվարին բնագավառ ես ընտրել քո գրական գործունեության համար՝ բնության ու մանուկների աշխարհը...

Խոսքը տեղ չհասավ: Նույնիսկ մտքումս քմծիծաղ տվի. «Ի՜նչ մեծ բան է արածս... դրանից էլ հեշտ բան...»:

Բայց երբ չորս անգամ գնացի Նախիջևանի Բիլ-լավա գյուղի վերին ձորերը որսի, երբ մեքենաս ջարդեցի քարքարուտներում, երբ այդ չորս որսորդությունն ինձնից ութ օր ժամանակ խլեց, և այդ ամեն չարչարանքիս արդյունքը եղավ մի փոքրիկ ակնարկ այն մասին, թե ինչպես էր նապաստակը իրեն չմատնելու համար քար ձևացել բաց ձյունի մեջ, նոր միայն հասկացա, որ գրելու դժվարին բնագավառ եմ ընտրել: Հետո ծանոթանալով վարպետի նամակներին՝ իր հակիրճ և խորը միտքը գտա Արշակ Չոպանյանին ուղղված մի նամակում: Եվ դա առիթ տվեց ինձ մտածելու. «Իսկապես, լեզու չունի, որ հետը խոսես, պատմի իր հոգսերն ու դարդերը... ունենա էլ ո՞նց խոսես, երբ քեզ տեսնելիս կամ փախչում է, կամ այնպես թաքնվում, որ գլուխն էլ տրորես, չի մատնի իր տեղը: Դե եկ, այսպիսի արարածի հոգեկան աշխարհը ցույց տուր հասարակությանը...»: Եվ իմ այդ դժվարին վիճակը զգալով՝ Վարպետը ոչ միայն քայլ առ քայլ հետևում էր իր գրաթոթովանքներին, այլև ամեն առիթով քաջալերում էր ինձ, որ ետ չկանգնեմ սկսածս գործից: Ինչո՞ւ, ի՞նչ շահ ուներ: Նրա մեջ խոսում էր հայրենիքի սերը,

ուստի ցանկանում էր իր հայրենիքն իր վես լեռներով, իր ծաղիկների բազմերանգությամբ, իր գողտրիկ կենդանիներով տեսնել ոչ միայն պոեզիայի մեջ, այլև, մանավանդ, արձակում իրական նկարագրությամբ:

Ինձ խրախուսելու նպատակով երբեմն ասում էր, որ այդ կարգի գրականությունը հայրենասիրություն է արթնացնում: Այն աստիճան շահագրգռված էր, որ մենք՝ բնության մեջ շրջագայող մարդիկս, մեր տեսած ու զգացած ամեն ինչը հաղորդակից անենք մեր հասարակությանը, որ մի օր խորհուրդ տվեց.

- Ես գիտեմ, որ տեսած ամեն ինչ չես գրում: Գրի՛ր, թեկուզ մանրուք լինի, թեկուզ անարժեք բան թվա քեզ, գրի՛ր...

Զարմացա՝ այս ինչ է ասում այնքան խստապահանջ Ավ. Իսահակյանը:

- Հա՛, - ասացի, - Վարպե՛տ, շատ բան դուրս է մնում որսորդական պրակներիցս, որովհետև թերթերում ես այսպես եմ դաստիարակվել. «Շատ տես կոլխոզներում, բայց քիչ գրի՛ր, գրի՛ր կարևորը...»:

- Ճիշտ են ասել քեզ քո խմբագիրները: Բայց դա բնությանը չի վերաբերում: Մեզ մոտ այդ կարգի գրականություն նոր է ստեղծվում, հրապարակի վրա թե՛ գրողներ չկան, թե՛ այնքան նյութ, որ ընտրություն կատարես: Բայց մի բան էլ ճիշտ է. ամեն նյութ պատմվածք չի դառնա: Ուստի քեզ հետևյալ միջոցն եմ առաջարկում. քո գլուխը, գիտեմ, մանկուց լիքն է բնության պատկերներով, երևույթներով, դեպքերով: Գրի՛ր ակնարկների գիրք Հայաստանի կենդանական աշխարհի մասին և այնտեղ օգտագործիր այն ամբողջ մանրուքը, որ դուրս է մնացել քո որսորդական պրակներից...

- Հետո՞, բան կստացվի՞, - ներքուստ ալեկոծվեցի ես:

- Կստացվի: Ես քո թղթակցություններն անգամ կարդում եմ, դու կարող ես: Դա շատ կարևոր աշխատություն կլինի, այդ կարգի գիրք մենք չունենք հայ գրականության մեջ... Դե ես քեզ տվի բանալին, գնա գլխիդ դռնակները բա՛ց և սկսի՛ր...

Ու հայրական խրախուսող ժպիտով ճամփու դրեց ինձ:

Սկսեցի... Ի՜նչ ինֆարկտ, ի՜նչ նախազգուշացումներ բժիշկներիս կողմից. առաջադրանքը ու խրախուսանքը գալիս էր մեծ հայրենասերի, մեծ բնապաշտի կողմից, ինչպե՞ս կարող էի հանգիստ մնալ: Գործը գնալով ընդարձակվեց: Վերադարձա հազարամյակների խորքերը, ծանոթացա վաղուց անհետացած կենդանիների ոսկորներին, հարցուփորձ արի մեր հին մատենագիրներին, պրպտեցի դեղնած ու հնամաշ մագաղաթները և կատարեցի ու «գերակատարեցի» իմ մեկենասի առաջադրանքը: Նրա ցանկացած մեկ հատորի փոխարեն հինգ հատոր ստացվեց, վեցերորդն էլ հանձնված է տպագրության...

Ահա թե ինչ դեր խաղաց մեծ մարդու տված խորհուրդը իմ կյանքում: